

ԳԱԼՏԱԳԱԶՅԱՆ ԷԳՎԱՐԴ

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական
ինստիտուտի մագիստրատուրայի բաժնի վարիչ,
մասնկալարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Կրթության որակի գնահատումը հնարավոր չէ արժևորել մեկ ցուցանիշի օգնությամբ: Այն պահանջում է համակարգված գնահատում՝ ելնելով ներքին և արտաքին միջավայրերում կրթական ծառայությունների որակը արժևորող մոտեցումներից:

Բարձրագույն կրթության մեջ որակը բազմաչափ, բազմաբովանդակ և դինամիկ հասկացություն է, որը վերաբերում է կրթական մոդելի համատեքստին, ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, ինչպես նաև որոշակի համակարգի, ուսումնական հաստատության, կրթական ծրագրի կամ առարկայի առանձնահատուկ չափանիշներին:

Որակի ապահովման գործընթացում բուհի խնդիրը ոչ միայն որակյալ շրջանավարտ տալն է, այլև բոլոր աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, որն իր մեջ ներառում է՝ կադրերի նախապատրաստում, գործընթացների արդյունավետ կազմակերպում, կադրերի որակավորման անընդհատ բարձրացում և, որ, ամենակարևորն է՝ բուհում կրթության որակի մշակույթի ստեղծում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրթության որակ, վերահսկողություն, գործընթաց, ընթացակարգեր և մեխանիզմներ, գնահատում:

Կրթությունը բոլոր ժամանակներում համարվել է պետական անվտանգության ապահովման կարևորագույն գործիք, քանի որ այդ ոլորտում է ձևավորվում ազգային ամենաթանկ արժեքը՝ մարդկային կապիտալը: Հետևաբար, հասարակու-

թյունը մշտապես շահագրգռված է՝ ունենալ կրթության արդիական համակարգ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորել մարդ-քաղաքացի, այլև պատրաստել մասնագետներ, ովքեր սոցիալ-տնտեսական կյանքի շարժիչ ուժն են: Կրթությունը և մարդկային ռեսուրսները համարժեք են իրական կապիտալին:

Վաղ դասականները մարդկային կապիտալը համարում էին հարստության աղբյուր, ազգի ուժ, իսկ կրթությունը՝ սոցիալ-տնտեսական վերահսկման և դասակարգային շերտավորման գործոն: Շատ երկրներում տնտեսական զարգացման մեծությունը պայմանավորված է մարդկային գործոնի որակավորման բարելավմամբ: Եվ վերջապես, կրթությունը տնտեսության զարգացման անկյունաքարն է, և կրթության մեջ կատարվող ներդրումները շատ կարևոր են երկրի զարգացման համար:

Դասական տնտեսագիտության տեսաբանները շեշտում են, որ աշխատանքի առաջարկը էականորեն կփոխվի կրթության և առողջապահության մեջ ներդրումներ կատարելու շնորհիվ:

Հայաստանի կրթական համակարգում ներկայումս կատարվող բարեփոխումներն ուղղված են աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական նոր պայմաններին ուսանող երիտասարդության ինտեգրմանը՝ կրթությունը դիտելով որպես մարդու ներդաշնակ և համակողմանի զարգացման, հոգևոր մեծ կարողություններով օժտված երիտասարդության դաստիարակության կարևորագույն բնագավառ:

Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտը, զանգվածային առողջարարական ֆիզկուլտուրային ներկա վիճակը, ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման մակարդակը, առողջ ապրելակերպի արմատական բարելավումը, օլիմպիական կրթության և օլիմպիական գաղափարների տարածումը, ինչպես նաև օլիմպիական խաղերին ու միջազգային մրցասպարեզներում հաղթանակների հասնելու ձգտումը կարևորում են ֆիզկուլտուրային բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը, իսկ վերջին տարիներին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարացման միտումները ցույց են տալիս, որ ֆիզիկական դաստիարակության մասնագետների պահանջարկը տարեցտարի ավելի է մեծանում:

Թվարկված և բազմաթիվ նմանատիպ խնդիրներ լուծելու անչափ կարևոր դերը հանրապետության բարձրագույն կրթության համակարգում տրված է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտին, որն արդեն իսկ ձեռնամուխ է եղել բարձրագույն կրթության ոլորտում կատարվող փոփոխություններին հիմնովին կատարելով իր առջև դրված խնդիրները:

Հայաստանի որպես կրթության բարձր մակարդակի ձգտող երկրի համար այսօր կարևորագույն խնդիր է կրթական համակարգի պահպանումն ու հետագա զարգացումը որպես երկրի առաջընթացի և միջազգային ասպարեզում մրցունակություն ապահովելու գրավական:

Երկրի զարգացման վրա կրթությունն անբաղաձեռնում է այնքանով, որքանով ուսանողը արագ է յուրացնում նոր գաղափարներ, հարմարվում փոփոխություններին՝ հաճախ անկանխատեսելի իրավիճակներում:

Այսօր ուսանողին մատուցվող բուհական կրթական ծառայության որակը

չպետք է միայն գնահատել դասախոսությունը «սերտած» ուսանողի բարձր գնահատականներով, այլև այն մասնագիտական գիտելիքներով, որոնք անվերապահորեն պահանջվում են աշխատուժի շուկայի կողմից: Ուստի, կրթության որակի բարելավման առաջնահերթ ուղին ուսումնական գործընթացի ծանրության կենտրոնի տեղափոխումն է՝ խիստ ակադեմիացված ոլորտից գործնական ուղղվածության ոլորտ: Բացի այդ, ուսումնական հաստատության արդյունավետ աշխատանքն անհնար է՝ առանց գործունեության և առաջին հերթին կրթության, գիտության, տեղեկատվության և մյուս ծառայությունների, որակի բարձրացմանն ուղղված գործընթացների անընդհատ կատարելագործման:

Գաղտնիք չէ, որ կրթությունը չի կարող զարգանալ ներկայիս գիտատեխնիկական և տնտեսական աճի կտրուկ վերելքի պայմաններում: Ավելին, կրթության զարգացման տեմպերը որոշ դեպքերում արդեն հետ են մնում հասարակության զարգացման տեմպերից, արդյունքում՝ ուսուցման համակարգում ձևավորվում է «Ոչ տեղին, ուշացած կամ կիրառապես ժամկետանց» գիտելիքների մատուցման վտանգ: Այդ է պատճառը, որ շատ երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա և այլն) մասնագիտական ուսուցման բնագավառում վաղուց գործում են չափորոշիչներ, որոնք հստակ արտացոլում են կրթական ծառայությունների մատուցման նկատմամբ հասարակության արդիական պահանջները՝ շաղկապելով մասնագիտական ուսուցումը սոցիալ-տնտեսական առաջընթացի հետ:

Հաջորդ գործոնը գլոբալացման պահանջով կրթական միասնական տարածքի ստեղծումն է: Այս պայմաններում բարձրագույն մասնագիտությամբ շրջանավարտը առավել շարժունակ է դառնում աշխատանքի միջազգային շուկայում: Բնականաբար, նման շարժու-

նակությունը պետք է գործի կրթական միասնական չափորոշիչների և կոորդինացված բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշիչների առկայության պայմաններում:

Այդ առումով կրթության ստանդարտայնացումը բարձրացնում է ուսումնական գործընթացի ռազմավարության արդյունավետությունը և բարելավում է ծրագրային կուլտուրան ուսումնական ոլորտում:


Եթե բակալավրատը համարվում է լիարժեք բարձրագույն կրթության առաջին աստիճան և նպատակ է հետապնդում համալիր ուսուցմամբ պատրաստել պրոֆեսիոնալ մասնագետներ, ապա մագիստրատուրայում, որը բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, չի կարող կրկնել բակալավրատի ուսումնական պլանը, քանի որ, ի տարբերություն վերջինիս, լրիվ այլ նպատակ է հետապնդում: Եթե բակալավրատի շրջանավարտը գիտի, թե իր մասնագիտության գծով «ինչ պետք է աշխատել», ապա մագիստրանտը պետք է պատրաստ լինի, թե մասնագիտության գծով «Ինչպես պետք է մտածել և գործել»: Այդ առումով կրթական չափորոշիչները կարգավորում են կրթության շարունակականությունը ոչ միայն «դպրոց-քոլեջ-բուհ», այլև «բուհ-հետբուհական կրթություն» շղթայում:

Մագիստրանտի աշխատանքային պարտականությունների մեջ, բակալավրի գործնական հմտություններից բացի, ներառվում են կառավարչական ֆունկցիաներ, ինչպես նաև գիտամանկավարժական գործունեություն: Մագիստրոսներին իրավունք է վերապահվում դասավանդելու կադրերի վերապատրաստման ծրագրերում, մասնագիտացված քոլեջներում, նաև բուհերում: Այստեղ, ի տարբերություն բակալավրատի, կրթությունը չի կենտրոնացվում բարձրագույն մասնագիտության հմտու-

թյունների ձեռքբերման վրա: Մագիստրատուրայում նախատեսվում են նեղ մասնագիտական հիմնախնդիրների քննարկումներ, մասնագիտական որոշումների կայացմանը նպաստող հատուկ կուրսերի ուսուցանում, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ: Հետևաբար, բուհի կրթական չափորոշիչները պետք է ապահովեն նաև կրթության անընդհատությունն այնպես, որ բակալավր մասնագետի ուսումնական «Ելքի» բնութագրիչները հանդես գան որպես մագիստրոսական կրթության «Մուտքի» բնութագրիչներ:

Հայաստանի Հանրապետությունում կրթական բարեփոխումների ընթացքը ենթադրում է նաև գնահատման կրեդիտային համակարգի կիրառում, առավել ևս, երբ մեր հանրապետությունը որդեգրել է Բոլոնիայի միասնական կրթական դաշտի ձևավորման ուղին: Այս համակարգը երկու հիմնական նպատակ է հետապնդում. առաջին. ուսուցման արդյունքների հաշվարկում և ուսումնառության արդյունավետության գնահատում, երկրորդ՝ միասնական կրթական համակարգում ուսուցման արդյունքների համեմատական դաշտի ապահովում: Վերջինիս առավելություններից է նաև այն, որ գնահատման դաշտ է ընդգրկվում ոչ միայն լսարանային հաճախումների ընթացքում ուսանողների կատարած թեստային աշխատանքները, սեմինարներում բանավոր պատասխանները, այլև ուսանողների արտալսարանային աշխատանքները: Այստեղ կարևոր է նաև դասախոսությունների արդիականացման և նոր որակական մակարդակով ու մեթոդներով անցկացումը:

Կրթության որակի պահպանումն ու բարձրացումը կախված է նրանից, թե վերջինս ի՞նչ ձևով և ո՞ւմ կողմից է վերահսկվում: Այն հիմնականում իրականացվում է երեք ուղղությամբ՝ պետական, ներբուհական և հասարակական (նկ. 1):



Նկ. 1. Կրթության որակի ապահովման գործընթացում վերահսկողության մակարդակները

Մասնագիտական կրթության ծառայությունների մատուցման որակի պետական վերահսկողության անհրաժեշտությունն առաջին հերթին առնչվում է ազգային անվտանգության հետ, քանի որ վերջինիս պատասխանատվության վրա է դրված ազգաբնակչության առողջության ամրապնդման և համակողմանի զարգացման, դաստիարակության և մասնագիտական կրթության ապահովումը: Կրթության որակի ներբուհական վերահսկողության մոտեցումները տարբերվում են պետական վերահսկողությունից: Դրանք ունեն մի շարք առավելություններ՝ վերահսկողության գործընթացի անընդհատություն, վերահսկողական լծակների բազմազանություն: Եթե կրթության որակի պետական վերահսկողությունը իրականացվում է մեկ հարթությամբ (լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն), ապա ներբուհական վերահսկողությունը կատարվում է ինչպես ուղղահայաց (դեկանատներ, մագիստրատուրայի բաժին և այլն), այնպես էլ հորիզոնական (ամբիոններ, դասախոսներ և այլն), ինչպես նաև վերահսկողության արդյունքների հրապարակայնացումը հնարավոր է սահմանափակել, որը հնարավորություն կտա ավելի շատ խոսել

և քննարկել կրթության որակի ուժեղ և թույլ կողմերի մասին: Կրթության որակի հասարակական հսկողությունը համարվում է ոչ պակաս կարևոր: Հանրության կողմից կրթական ծառայությունների արժևորման հիմքում դրվում է ոչ թե ուսումնական տեխնոլոգիաների կիրառման ներքին գործոնը, այլ հասարակության տարբեր շերտերում ձևավորված՝ կրթօջախի համբավի արտաքին գործոնը: Գաղտնիք չէ մասնագիտական հասարակական կազմակերպությունների կողմից վարկանիշային սանդղակների կազմումը, որը ևս անուղղակի կերպով անդրադառնում է կրթության որակի վրա: Պակաս կարևոր չէ աշխատաշուկայում բուհի շրջանավարտի պահանջարկը (շրջանավարտի աշխատանքի ընդունման արագությունը, նեղ մասնագիտությամբ աշխատանքի տեղավորված շրջանավարտների տեսակարար կշիռը), ինչու չէ, նաև դիմորդների վերաբերմունքը բուհի նկատմամբ:

Կրթության որակը բնութագրող գործոնները արժևորելուց զատ, պետք է ուշադրություն դարձնել կրթական ծառայությունների որակին նպաստող գործոններին, ինչպիսիք են՝ ուսումնական տարածքները, գրադարանային ֆոնդի

հագեցվածությունը, դասախոսական կազմի որակական աստիճանը (վերապատրաստման և ատեստավորման գործընթացները), խմբերի ձևավորման մեթոդաբանությունը և այլն: Փոքր-ինչ դժվար է խոսել կրթության որակի վրա ազդող այն գործոնի մասին, որը կոչվում է «կրթավճար», որովհետև վերջինիցս է կախված դասախոսի աշխատավարձի ձևավորումը, իսկ դա էլ իր հերթին ազդում է կոռուպցիոն ռիսկերի և կրթության որակի վրա:

Բացի այդ, կրթության որակին նպաստող գործոնների ցանկը պարբերաբար փոփոխվում է՝ ոչ միայն ելնելով բուհի կողմից մատուցվող ուսումնական ծառայությունների առանձնահատկություններից, այլև ուսումնական գործընթացին ներկայացվող ժամանակակից պահանջներից: Ներկայումս լայն տարածում է ստանում ակտիվ մեթոդները դասավանդումը: Ավանդական գրատախտակին փոխարինելու են գալիս տեսաուսումնական սարքերը, դասական սեմինար պարապմունքների հետ միասին կազմակերպվում են քննարկումներ և կլոր սեղաններ:

Ներկայումս շատ կառավարություններ հատուկ ուշադրություն են դարձնում կրթության ոլորտին՝ որպես երկրի տնտեսական և սոցիալական զարգացման կարևոր գործոն: Եվ շատ երկրներ մեծացնում են իրենց բյուջեում կրթությանն ուղղված ծախսերի տեսակարար կշիռը՝ ձգտելով ավելացնել կրթության ոլորտ մուտքի աստիճանը (Շվեդիա, Գերմանիա, ԱՄՆ, Նորվեգիա և այլն), այսինքն՝ այն երկրները, որոնք թույլ են հաղորդակցվում գլոբալ գիտելիքների համակարգի արագ զարգացմանը, կհայտնվեն ոչ բարենպաստ պայմաններում: Վերջին հաշվով հասարակության մեջ յուրաքանչյուր անհատի դիրքը որոշվում է հասարակության կայունությունը և բարեկեցությունն ապահովելու նրա կարողությամբ,

ներքին ընդունակություններով, որոնք ձևավորվել և որոշակի ուղղություն են ձեռք բերել կրթական համակարգում:

Մասնագիտական կրթության համակարգն այսօր կոչված է պատրաստելու փոխանցելի գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված մասնագետներ, ովքեր ի վիճակի կլինեն գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում: Այսպիսի ուղղվածության արդյունքներն առավել արդյունավետ են լինում, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են լինում ավելի մեծ ինքնուրույնությամբ ու ճկունությամբ, արդյունքում՝ ուսանողների մոտ ձևավորվում է գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորել ամբողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը՝ նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպլեքսացման գործընթացը կառավարելու գործառնությի իրականացումը:

Կրթության որակի ապահովման գործում կարևոր նշանակություն ունեն նաև թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

Ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների և հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:

Կրթության որակը էապես կախված է ինստիտուտում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործու-

նեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում:

Կրթության որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է մասնագիտական ուսումնական հաստատությունը, որը պետք է ապահովի դրա համապատասխանությունը որակի ազգային և միջազգային շրջանակներին:

Կրթության որակն ապահովելու համար հաստատությունը պետք է վստահեցնի, որ ունի քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված են՝ ապահովելու և բարելավելու կրթության որակը: Այդ նպատակին հասնելու համար հաստատությունը պետք է մշակի և իրագործի կրթության որակը պարբերաբար բարելավելու ռազմավարություն: Վերջինս պետք է հաշվի առնի նաև ուսանողների և այլ շահեկիցների դերն ու պահանջները:

Պետք է կատարվի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և պարբերական ուսումնասիրություններ:

Կրթության որակի կարևոր գործոններից է դասախոսի արհեստավարժությունը, որը պայմանավորված է մասնագիտական խնդիրների արդյունավետ կատարմամբ և գործունեության հանդեպ ստեղծագործական մոտեցմամբ: Այն հնարավորություն է տալիս մրցունակ ինքնադրսևորվել և ինքնաբավա-

րարվել՝ արդարացնելով սովորողների ու մասնագետների իմացական մակարդակը: Դասախոսի աշխատանքի որակի կառավարման ցուցանիշները հիմնվում են երկու հիմնարար սկզբունքի վրա՝ անձի մասնագիտական գործունեություն և տեղեկատվահաղորդակցական արհեստավարժություն: Կարևոր է նաև դասախոսի մասնագիտական և բարոյահոգեբանական կերպարը, որը ներառում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ բարեկրթությունը, բարոյականությունը, բարյացկամությունը, կոմպետենտությունը, ինքնավերլուծությունը, պատասխանատվությունը, արհեստավարժությունը, ակտիվությունը, ճշտապահությունը, ինքնակազմակերպվածությունը, նորարությունը և այլն:

Այսօր գլոբալացումը մարտահրավերներն է նետել հասարակությանը, որին համակարգված պատասխանելու հիմնական պայմանը մրցունակ կադրերի պատրաստումն է, կադրեր, ովքեր կկարողանան նորարարական մոտեցումներ ցուցաբերել առկա հիմնախնդիրների լուծման գործընթացում և կանխատեսել ապագայի կառավարման տեսլականները՝ հենվելով համընդհանուր և բազմակողմանի գիտելիքների վրա, նոր մտածողությամբ, ինչպես նաև արդի տեխնոլոգիաները տնօրինելու ունակությամբ:

Հոլլիսթի ներկայացման փարեթիսիլը՝ 15.12.13 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
3. Պետրոսյան Հ., «Բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման հիմնախնդիրները արդի պայմաններում», Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, N 1(7) Եր., 2010, էջ 20–31:
4. Պետրոսյան Հ., «Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներ» (տեսություն և պրակտիկա), Մենագրություն. Եր., «ԱՆ–ՋՈՆ» հրատարակչություն, 2010–520 էջ:

5. Ստեփանյան Ա.Գ., «Ֆիզկուլտուրային կրթության տեխնոլոգիաների կիրառման ուղիները» Մանկավարժական միտք, N 2–3, Եր., 2008, էջ 88–93:
6. Казарян Ф. Г. Физическое воспитание в системе обучения, воспитания и образования подрастающего поколения// Педагогическая мысль, N 1–2, Ереван, 2006. С 27–30.
7. TRENDS V: Universities shaping the European Higher Education
8. Area. An EUA Report, 2007, 100p.
9. World education report, 2000.–UNESCO, Paris, 2000, p. 116.

ФАКТОРЫ, ОБЕСПЕЧИВАЮЩИЕ КАЧЕСТВО ОБУЧЕНИЯ В ВУЗЕ

ԳԱԼՏԱԳԱԶՅԱՆ ԷԴՎԱՐԸ

*Кандидат педагогических наук, доцент Заведующий отделением магистратуры
Армянского государственного института физической культуры*

Оценка качества образования посредством лишь одного показателя невозможна. Здесь требуется системный оценочный подход, основанный на внутренних и внешних критериях оценки образовательной среды.

Качество высшего образования – многомерное, многокомпонентное и динамическое понятие, связанное с контекстом учебной модели, с миссией и целью учебного заведения, а также со специфическими критериями определенной системы образования, учебного заведения и особенностями учебной программы или данной учебной дисциплины.

Задачей вуза в процессе обеспечения качества обучения является не только качество выпускников, но и эффективная организация всех осуществляемых в процессе обучения работ, что включает подготовку кадров, эффективную организацию всех образовательных процессов, постоянное повышение квалификации преподавателей и – что наиболее важно – создание культуры образования в вузе.

Дата представления статьи: 15.12.13 г.

QUALITY ASSURANCE FACTORS IN HIGHER EDUCATION

EDVARD GALTAGAZYAN

*PhD in Pedagogy, Associate Professor Head of the Master's Department
of Armenian State Institute of Physical Culture*

Assessment of the quality of education through a single indicator is not possible. It is required a systematic assessment approach based on internal and external criteria to assess the educational environment.

The quality of higher education is a multidimensional, multi-component and dynamic concept related to the context of an educational model, mission and purpose of the institution as well as specific criteria for a particular system of education, institution and the characteristics of the educational program or academic discipline.

The task of the University in the process of education quality assurance is not only the quality of graduates but also the effective organization of all on-going activities of the learning process, which includes training, effective organization of all educational processes, continuous professional development of teachers. Henceforth, the most important thing is to create a culture of education at the University.

Article submission date 15.12.13